

ԳՐԱԽՕՍԱԿԱԼ

Նոր Վիպագրի Մը Նորոգող Տեսլականը

(«Եւ եղև լոյս...»՝ Վէպ, 259 էջ, հեղինակ՝ Նուրհան Արք. Մանուկեան, հրատ. Հայց. Եկեղեցւոյ Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդութեան, 2001)

Ինչո՞ւ միլիոնաւոր հայախօս հայեր, որոնք կրնան հայերէն կարդալ ու գրել, չեն ուզեր հայերէն կարդալ: Բանաստեղծ Զարեհ Մելքոնեան այս իրողութեան համար գտած է «մատերիալիստական» բացատրութիւն մը — քիւրտ Հասոյիմ ախորժակը:

Հասոն մահամերձ է, կը մերժէ ուտել: Բարեկամները արտակարգ ջերմութիւն ցոյց կուտան: Հասոն հագի լսելի դողդոջ ձայնով կը մերժէ յաջորդաբար իրեն առաջարկուած մածունն ու քեպապը, բայց երբ երրորդ սրտակից մը կ'առաջարկէ հնդկահա՛ւ բերել, կը պոռթկայ:

— Սիրտս սո՛խ անգամ ուտել չ'ուզեր, հնդկահաւը ի՛նչ ընեմ:

Հակառակ մեր հաւաքական հասոյեական ախորժակին, սեղանը լեցուն է համեղ հայ գրով ու գրքով, թէև նուազ ճոխ քան առաջ եւ վերջին ընթրիքի մը թախիծէն զարնուած:

Վերջերս գրեթէ միաժամանակ ստացայ երեք գիրք: Առաջինը՝ «Լուռ Վկաներ»: Հեղինակը՝ Անի Աղպաշեան, որ քանի մը հայուհիներու հետ Պէյրութէն ինքնաշարժով այցելել է Կիլիկիա և Թրքահայաստան, կը պատմէ իր տպաւորութիւնները, տեսածն ու լսածը: Ի՞նչ մնացած է հայէն ու իր հայրենիքէն: Տիգրանակերտի Ս. Կիրակոս Էրմէնի Քիլիսէսին և անոր 90-ամեայ պահակ Անդրանիկը, որ մականունը չի գիտեր, բայց կ'աղաչէ հայ կիներուն եկեղեցւոյ մէջ երգել «Իբրև Արծիւ»ը: Վանեցի հայու ծոռ եղբարք Իպրահիմ և Մուրատ՝ սեփականատէրք «Աղթամար Գէմփինկ» ճաշարանին Վանայ լճի ափին:

«Լուռ Վկաներ»ը կ'ըսէ.— կայինք, չկանք:

Երկրորդ գիրքը՝ «Ամերիկեան Կողմն Աշխարհի», վերահրատարակութիւնն է Անդրանիկ Ծառուկեանէն երեք յօդուածաշարքերու, որոնք 1960-ական թուականներուն լոյս տեսած էին Պէյրութի իր «Նայիրի» շաբաթաթերթին մէջ:

1950-1980 Ծառուկեան եղաւ հայ հրապարակագրութեան ամենէն փնտռուած դէմքը, որովհետև հայ կեանքի անկամրջելի կացութեան բերաւ կամրջող հայեցակէտ մը, հրապարակագրութիւնը ըրաւ յուշագրութիւն, յուշագրութիւնը՝ հրապարակագրութիւն և, «Վերջին Անմեղը» վէպին պարագային, գրականութիւն: Այսօր Ծառուկեան պէտք է կարդանք վերջին 50-100 տարիներու դէպքերուն և յայտնի դերակատարներուն մասին իր կարծիքէն աւելի՝ այլամերժօրէն ի՛ր ծանօթութեան լայն դաշտին մէջ ինկածները չափելու և ճանշնալու համար:

Ամերիկա, ուր 50-ական, 60-ական թուականներուն Ծառուկեան

այցելած կը թուի ըլլալ երկու անգամ, նոր ճամբաներու վրայ գտած նոր բարեկամներ կը յայտնեն իրենց համոզումը ԱՆԳԼԻԱԽՕՍ Հայց. Եկեղեցիով փրկելու գոնէ նոր սերունդներուն կէսը, չկորսնցնելու համար ամբողջը: Ինք ալ համաձայն է ստրատեգիային... անշուշտ բարեկամաբար, որովհետեւ չ'ուշացներ նկատողութիւնը. «Երոպայի հայութիւնը կը նահանջէ առանց երգի: Ամերիկայի հայութիւնը կը նահանջէ շարականով»:

«Ամերիկեան Կողմն Աշխարհի»ն կ'ըսէ.— կա'նք, բայց *երթալոց* ենք: 1929ին Ծահան Ծահնոր Փարիզէն ահագնագեց սփիւռքի հայութեան «Նահանջը Առանց Երգի»: Ծուշու Փիեռոն, մամայէն չէվիրմէի անոյշ և քէսէ ստացող Պետրոսը, հոգեկան փոթորիկի մը պահուն կ'ուզէ, կը փորձէ ի'ր «Հայր Մեր»ին ապաւինիլ, չի կրնար, չի յիշեր, մոռցեր է. կը հարկադրուի ֆրանսացի բարեկամին ետէն կրկնելու Notre père qui êtes aux cieux, que votre nom...

Պետրոս սարսափած էր իր կորսնցուցածին համար, որովհետեւ Հա'յ էր. անձնական աղէտ ճանչնալէ շատ առաջ, նոյնիսկ ափերուն խորութիւնը կտրծքերով լեցուցած օրերուն և Նէնէթի դրախտին մէջ, տեսեր էր ազգային աղէտը: Մեղքցուելիքը Պետրոսը չէ, հայութի'նն է՝ արևելեան և արևմտեան կողմն աշխարհի, ուր մարաշախտները կարօտով փնտռել կուտան Ծահնորի «հաջող» աղաները, որոնք չըմբռնեցին աղէտը և Ծառուկեանի «յետսապահ զօրապետները», որոնք տեսան աղէտը և ծրագրեցին անոր դէմ կռուիլ... աղէտով:

Հրապարակի վրայ է նոր գիրք մը, ստացածներուս երրորդը: «Եւ Եղև Լոյս...»ը վէպ մըն է՝ վերանորոգող տեսլականով մը, որ կ'ըսէ.— կա'նք և կրնա'նք մնալ, եթէ...: Այս ըսելու համար հեղինակը ընտրած է պատմութիւն մը, զոր գիտենք, լսած ենք մեր մանկութեան օրերէն, թերևս անկողնի մէջ, քուն մտնելէ առաջ, թերևս կիրակնօրեայ դպրոցի մը գրասեղաններուն առջև կամ նախակրթարանի մէջ կրօնի կամ ազգային պատմութեան դասի պահուն: Պատմութիւն մը, որ կուգայ չորրորդ դարէն և որուն պաշտօնական անունն է «Ագաթանգեղեայ Պատմութիւն — Վարք և Պատմութիւն Սրբոյն Գրիգորի»:

«Եւ Եղև Լոյս...»ը ունի չորս գլուխ և շատ մօտէն կը հետևի Ագաթանգեղոսի պատմածին: Առաջին գլուխ— Հայոց Խոսքով Թագաւորը կը սպաննուի իր ազգականին՝ ճենգ Անակի ձեռքով: Երկրորդ գլուխ— Խոսքովի տղան՝ որբուկն Տրդատ կը մեծնայ Հոռմի մէջ, Անակի տղան՝ որբուկն Գրիգորիոս կը մեծնայ Կեսարիոյ մէջ: Երրորդ գլուխ— Տրդատ և Գրիգորիոս կը վերադառնան Հայաստան. առաջինը՝ Թագաւոր, երկրորդը՝ Թագաւորին հաւատարիմ, բայց անհնազանդ պաշտօնեայ: Թագաւորը կը լլկէ և կը սպաննէ քրիստոնեաները: Թագաւորը՝ խոզ, Գրիգորիոս՝ բժիշկ: Չորրորդ գլուխ— Մկրտութիւն ազգիս հայոց և հիմնադրութիւն Հայրապետական Աթոռին, այսինքն Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ:

Բայց ինչո՞ւ վէպ, պատմական վէպ կամ պատմավէպ (historical

novel), ինչպես Խաժակ Արք. Պարսամեան իր նախաբանին մէջ որակած է գիրքը, երբ պատմութիւնը կայ, մանաւանդ երբ ան լայնօրէն ծանօթ է մեզի:

Պատմութիւնը (history) կ'արձանագրէ կեանքի փորձառութիւնը պատճառի և հետևանքի կապով: Վէպը կը վերստեղծէ կեանքի փորձառութիւնը յուզումներու փոխարարներութեամբ և փոխներգործութեամբ: Սիրային, արկածախնդրական, ոստիկանական կամ հոգեբանական վէպը ընդհանրապէս ամբողջութեամբ երևակայական պատմութիւն է՝ ստեղծուած վիպասանին ուղեղին մէջ:

Պատմական վէպ գրողը մեծ պատմութիւնը չ'ստեղծեր, որովհետև ան կա՛յ, բայց կը լեցնէ մեծ պատմութեան մեծ բացերը և ապրում կուտայ ամբողջին ի՛ր երևակայութեամբ, ի՛ր սրտով, ի՛ր աշխարհահայեացքով: Օրինակ՝ Ագաթանգեղոս չ'ըսեր թէ Հայաստանէն փախչելէ ետք Տրդատ և Գրիգորիոս տարիներ շարունակ ի՛նչ ըրին, առաջինը Հոռմի, երկրորդը Կեսարիոյ մէջ. կամ՝ Գրիգորիոս Պարթևի կինը՝ Մարիամ, երկու զաւակներու մայր, որուն խօսքն իսկ չ'ըներ, ի՛նչ զգաց երբ ամուսինը կը զբաղէր Կեսարիոյ քրիստոնեաներով:

Ըստ իս վէպին ամենէն դժուարը պատմական տեսակն է: Վէպի մը պատմութեամբ (story) պէտք է հետաքրքրական ըլլայ, որպէսզի էջերը դարձնենք: Եւ հետաքրքրական ընելու համար վիպագիրը պէտք է պատահարներու շարքով մը տրամաթիք հարցումներ ստեղծէ ընթերցողին մտքին մէջ, զայն պահէ անծանօթին յայտնութեան կամ անորոշին բացայայտման ակնկալութեամբ: Պատմական վէպին մէջ, երբ մանաւանդ պատմութիւնը շատ ծանօթ է և արտա-գրական նկատումներով հեղինակը, ինչպէս այստեղ, քայլ առ քայլ կը հետևի պատմիչին, չափազանց կը դժուարանայ տրամաթիք հարցերու ստեղծումը:

«Եւ Եղև Լոյս...»ի պատմածին գլխաւոր տրամաթիք հարցումը պիտի ըլլար՝ Հայաստան քրիստոնեայ պիտի դառնա՞յ, թէ ոչ: Հարկատու հարցումները պիտի ըլլային.— Արտաշիր Սասան պիտի յաջողի՞ սպաննել տալ հայոց Խոսրով Արշակունի թագաւորը: Խոսրովի տղան՝ Տրդատ, պիտի յաջողի՞ գրաւել հօրը գահը: Տրդատ պիտի գիտնա՞յ Գրիգորիոսի որո՞ւն զաւակը ըլլալը: Գրիգորիոս ողջ պիտի մնա՞յ վիրապին մէջ:

Այս վէպին պատմութեամբը հետաքրքրական է, որովհետև վիպագիրը ստեղծած է մեզի անծանօթ նոր կերպարներ և անոնցմով հին, հին էջերէն դուրս բերած ծանօթ Խոսրովն ու Անակը, Տրդատն ու Խոսրովիդուխտը, Գրիգորիոսն ու Դիոկղետիանոսը, Գայեանէն և Հոփսիսմէն, շունչ տուած անոնց և անոնց իրարու հետ ունեցած յարաբերութեան և ներգործութեան միջոցաւ փոխանցած է այն «ստեղծկութիւնները», զորս Ագաթանգեղոս չէր կրնար գիտնալ իբրև պատմիչ կամ պատմաբան, բայց զորս միայն վիպագիրը կրնայ «գիտնալ»՝ հազարաւոր տարի առաջ իրեն տրուած մասնաւոր իշխանութեամբ: Իշխանութիւն մը կամ իրաւունք մը, զոր կ'ըն-

դունինք իբրև տուեալ և աշխարհի մէջ ոչ ոք կը յանդգնի զայն իրմէ խլել:

Կը հաւատանք վիպագրին երբ կը յայտնէ, զոր օրինակ, թէ Գրիգորիոս անսալով ներքին ձայնին Կեսարիոյ մէջ անձնուիրաբար լծուած էր քրիստոնէական կամ քրիստոնէացման աշխատանքի, իսկ գեղանի կինը՝ Մարիամ, որ խորապէս հաւատացեալ էր և համակ ծիծաղ ու խիճկ, լքուած՝ «... սկսած էր լեցուիլ նախ Կեսանքին դէմ, ապա Աստուծոյ, որ իր երջանկութիւնը վերածած էր կարճատև պատրանքի: Ան տակաւ սկսած էր ինքզինք հեռու պահել կրօնական արարողութիւններէն և փոխարէն առողջ էգի խանձուող միսերուն գոլորշիին հետ իր գանգատներն ալ ծուէն-ծուէն բարձրացնել դէպի Աստուած, սակայն Ան չլսեց զինք... Այդպիսի ատեններ երկար չէր տներ Մարիամի ծառացումը Երկնաւորին դէմ, որովհետև ընդվզումի ու բորբոքած զգացումներէն անմիջապէս ետք կը լսուէր անոր հանդարտ շունչով արտասանուած «Մեղա՛յ, Տէր, մեղա՛յ»ն...»:

Ամէն վէպ պէտք է ունենայ շրջապատ մը (setting) — ժամանակ, վայր, միջավայր: «Եւ Եղև Լոյս...»ին ժամանակը հիմնականին մէջ Գ. դարու երկրորդ կէսն է՝ Յ.Ք. 250-300 տարիները, վայրերը՝ Հայաստան (Վաղարշապատ, Երիզա), Հոռոմ և Կեսարիա, միջավայրը՝ պալատ, միջնաբերդ, կրկէս, գետափ: Գրականութիւնը բանասիրական կամ պատմաբանասիրական տուեալներու ստուգութիւն կամ հարցերու լուծում չի պահանջեր վիպագրէն, որովհետև վէպը ուսումնասիրութիւն կամ պատմագրութիւն չէ, այլ արուեստի գործ: Բայց վիպագրութեան արուեստը վիպագրէն կը պահանջէ բանասիրական պրպտումներ ընել վէպին տալու համար ճշմարտաման, համոզիչ շրջապատ մը:

«Եւ Եղև Լոյս...»ին հեղինակը շրջապատ կերտելու համար ապահովաբար հսկայ ճիգ թափած է: Դժբախտաբար մեր հին աղբիւրները բարենպաստ չեն: Օրինակ՝ թուական կ'ուզէք: Ահա թուական մը Ագաթանգեղոսէն. «ընդ ժամանակսն ընդ այնոսիկ», այսինքն «այն ատեն»: Վա՛յր կ'ուզէք: Ագաթանգեղոս կ'ըսէ. «ի կողմանցն յունաց», «ի սահմանս յունաց», «ի յունաց աշխարհին»: Ո՛ր է այս տեղը — Կեսարիա՞, Բիզանդիոն՞ (Կ. Պոլիս), Նիկոմիդիա՞, Հոռոմ, թէ Յունաստան: Պատասխան — կախում ունի:

Ծատեր վէպ կը կարդան իրողական տեղեկութիւններ սորվելու համար ալ: Հոչակ վայելող ամերիկացի կամ անգլիացի վիպագիրներ հետազօտողներ կը պահեն: Անոնց վէպերուն մէջ հաղորդուած տեղեկութիւնները ճիշդ, մեծապէս հետաքրքրական և յաճախ լայնօրէն ուսանելի են, անկախաբար այն իրողութենէն որ անոնց գլխաւոր նպատակն է պատահար մը կամ տեսարան մը կերտել, այսինքն վէպին պատմութիւնը հաւատալի ընել:

Վէպը տեղ մը նոյնացուցած է Պարթևը, Արշակունին և Պահլաւունին, ուրիշ տեղ մը պարթևական արին խառնած է հոններու և քուշաններու արեան մէջ. այս տեղեկութիւնները հետաքրքրական են, մանաւանդ

երկրորդը նորութիւն է ինծի համար, և եթէ ճիշդ են՝ կրնային ուսանելի ըլլալ, բայց պէտք է առնչուելին վէպին պատմութեան՝ համոզիչ դրուագի մը կամ պատահարի մը միջոցաւ, փոխանակ ներկայացուելու ամփոփումով մը (summation):

Ուրախութեամբ կը հաստատեմ որ այս անդրանիկ վէպով հայ գրականութեան տաճար կը մտնէ նոր գրագէտ մը, որ կը լրացնէ վիպագրէ մը պահանջուած պայմանները— երևակայութիւն, մշակուած միտք, լեզուի տիրութիւն (երբեմն շեղումներով) և զօրաւոր կամք: Բայց այս պայմաններուն լրացումը բաւարար պիտի չըլլար վիպագիր ըլլալու եթէ Նորհան Արք. Մանուկեանի պակսէր պատմելու շնորհը, որ նախանձելի է իր մէջ:

Ընդհանրապէս ամէն վիպագիր ներկայ կ'ըլլայ իր վէպին մէջ, բայց հայ բարձրաստիճան հոգևորականը, Երուսաղէմի լուսարարապետ սրբազանը, շեշտուած ներկայութիւն մը ունի: Եթէ կ'ուզէ մնալ տաճարին բեմին վրայ, ան պէտք է մասնաւոր ճիգ թափէ որ իր էջերուն մէջ ընթերցողը զինք չտեսնէ, անհետանայ իր էջերէն, հոն ըլլալով հանդերձ, Հուտինիին նման:

Վիպագիր Նորհան Արք. Մանուկեան կ'ուզէ որ հայ ժողովուրդը ապրի «Եւ Եղև Լոյս...»ի տեսլականով— Աստուած և հայրենիք անբաժան են: Աստուած և հայրենիք հայախօս, հայալեզու և հայատրոփ Հայց. Առաք. Ս. Եկեղեցոյ մէջ են: Կանք և կրնանք մնալ, եթէ չհեռանանք հայախօս, հայալեզու և հայատրոփ Հայց. Առաք. Մայր Եկեղեցիէն:

Բայց այս տեսլականը, որ մեզ ապրեցուցած է 1700 տարի, ունի իր corollary-ն: Ես կ'ուզեմ 1700 տարի ապացուցուած այս ճշմարտութեան բնական հետևութիւնն ալ յայտարարել.— Կա՛նք և կրնանք մնալ, եթէ աշխարհի լոյսերը, հոգերը և հովերը Հայց. Առաք. Մայր Եկեղեցին չհեռացնեն իր հայախօս, հայալեզու և հայատրոփ զաւակներէն:

Վէպը կ'ընթանայ կրօնաբարոյական մթնոլորտի մը մէջ, Յիսուսի ազնիւ և ազնուացնող ուսուցումներուն շունչով: Հեղինակը գրեթէ իւրաքանչիւր հատուած կամ տեսարան կ'եզրափակէ խորհրդածութեամբ մը, որ քարոզ է և կամ բարոյականի դաս: Վստահաբար ընթերցողին մէջ անմիջապէս բարեպաշտական զգացումներ արթնցնելու կամ ընթերցողը քրիստոնէավայել կեանքի առաջնորդելու նպատակով հեղինակը դիմած է դասախօսական միջոցին՝ փոխանակ իր մտածումները մաս դարձնելու պատմութեան ընթացքին, ինչպէս վիպագրութեան արուեստը կը պահանջէ, կերպարներուն բախումին, շարժումին, խօսակցութեան կամ ներքին մենախօսութեան միջոցաւ:

Հասկնալի է որ երբ վիպագիրը կը ներկայացնէ կամ կը պատմէ կերպարներուն ըսածն ու ըրածը, գործածէ ի՛ր լեզուն և ոճը, բայց երբ կը խօսեցնէ կամ շարժման մէջ կը դնէ կերպարները, պէտք է յարգէ անոնց անհատականութիւնը՝ իւրաքանչիւրին տալով իր դերին և դիրքին համապատասխան արտայայտութեան եղանակ մը: Տարօրինակ կերպով վէպին

մէջ Խոսքովի աչրին՝ Արփի թագուհին, նուպիացի կոյր Թալիա ստրուկը և Սիպիլ գուշակը կը խօսին նոյն թևաւոր ոճով, նոյն շեշտով: Այրերը գերծ չեն այս տափակցնող հաւասարութենէն:

Վայրերու, միջավայրերու պատկերացման կամ կերտման մէջ աչքի կը զարնէ Գ. դարու Հռոմը, որուն ճշմարտանմանութեան մէջ կը տեսնուի պրպտումներու քրտինքը, որ խնայուած է միւսներուն պարագային:

Վէպին լեզուն, զոր հեղինակը գործածած է ճարտարօրէն, հարուստ է, ունի վարակիչ ջերմութիւն մը և տեղ-տեղ կուտայ վայելքը թարմ, կենսայորդ պատկերներու: Արդարացում չկրցայ գտնել հայաստանաբանութեանց («չխնայել ոչ ոքի», «ցրող», «ցրեցին», «սառը», «արնագոյն», «նուիրուածութեամբ»), միջին արևելեան շրջաններու հայկական ընթացիկ ասացուածքներուն («հաստատ թոնով», «պահանջկոտ թոնով», «արցունքը աչքերնուն», «բան մը որ»), կարգ մը բայերու խոտոր խոնարհումին («թուաց», «բղխաւ», «կը կանգնեցուէր»), ցեցակեր պատկերներուն («ժամանակի ժանգոտած անիւր», «հպարտ ինչպէս սէգ Արարատ», «լեռները նման սապատները ցցած ուղտերու կարաւանին»), մի քանի համաձայնական զարտոյղութեանց և յօդուածանման էջերուն:

«Եւ Եղև Լոյս...»ը սրտագրաւ անակնկալ մըն է, յաջողութիւն մը, բայց մանաւանդ լուրջ կանխավճար մը առ հաշի գրական նոր իրագործումներու, որոնց բարձր ակնկալութեամբ է որ այս նշումները կը յանձնեն թուղթին:

Ֆորթ Լի, Ն.Մ.
Յունուար 9, 2002

Մ. ՀԱՅԿԵՆՑ